ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

(Периодический сборник научных статей)

№ 13

Ереван
Издательство ЕГУ
2017

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

JOURNAL OF ORIENTAL STUDIES
(scholarly periodical journal)

№ 13

YEREVAN
YSU PRESS
2017

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր *(նախագահ),* Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր, Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր, Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.թ., Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան), Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ), Գրեկյան Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2017

Մելքոնյան Ռուբեն[1]
Պողոսյան Նաիրա[2]

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԻԴՀԱՏ ՇՅՈՒՔՐՅՈՒ ԲԼԵԴԱՅԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ[3]

Բանալի բառեր՝ *Հայոց ցեղասպանություն, հուշագրություն, քեմալական վերնախավ, ուրացում, երիտթուրքեր*

Ներածություն

Ժամանակակից թուրքական պատմագրության մի շարք առանցքային դրույթներ, այդ թվում Հայոց ցեղասպանության խնդրին մերժողական և ժխտողական մոտեցումը, ձևակերպվել են դեռևս XX դարի սկզբում «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարների՝ Թալեաթի, Ջեմալի, Էնվերի և այլոց կողմից:

Առաջին համաշխարհային պատերազմում պարտվելով՝ նրանք սեփական հանցագործություններն արդարացնելու, համաշխարհային հասարակության բացասական ընկալումները մեղմելու համար առաջ քաշեցին մի շարք թեզեր, որոնք հետագայում իրենց արտացոլումը գտան 1923 թ. հիմնադրված Թուրքիայի Հանրապետության պաշտոնական պատմական

[1] Բ.գ.թ., դոցենտ, Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դեկան, E-mail: rubenmelkonyan@ysu.am
[2] Բ.գ.թ., Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ, E-mail: nairapoghosyan@ysu.am
[3] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 15T-6A319 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

դոկտրինում: Այս տեսակետների մեծ մասը կարելի է գտնել երիտթուրք առաջնորդների հուշերում: Ինչպես նշում է թուրք ուսումնասիրող Դույգու Թաշալփը. «Իթթիհաթականների հուշերը և՛ գրական ժանր և՛ եզակի գրական երևույթ են… Նրանք բոլորն էլ գրում են և գրեթե նույն բանն են գրում: Դա իսկապես կոլեկտիվ փորձառության պատում է, որն արտացոլում է հավաքական սուբյեկտիվություն: Խոսքները մեկ արած՝ հեղինակները պատասխանում են մեղադրանքին, օտարերկրյա ականատեսների վկայություններին, ինչպիսիք են Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի և Ռուսաստանի նախկին դեսպաններ՝ Հենրի Մորգենթաուն և Անդրեյ Մանդելշտամը… Այսինքն՝ իթթիհաթականները ոչ միայն պատասխանատվությունից ազատող հիշողության համակարգ են ստեղծում, այլև ճշմարտացիության մի նոր համակարգ: 1919-ին՝ պատերազմից հետո, իթթահաթականներն ամոթից չեն կարմրում, որովհետեւ իրենց «առաքելությունը» կատարած մարդու հանգիստ խղճով են ապրում»[4]:

Իսկական իթթիհաթական ոճով է գրված նաև հայտնի օսմանյան քաղաքական գործիչ, «Միություն և առաջադիմություն» կուսակցության հիմնադիր-անդամ, իսկ կայսրության անկումից հետո Թուրքիայի Հանրապետության Ազգային Մեծ Ժողովի պատգամավոր Միդհատ Շյուքրյու Բլեդայի «Կայսրության անկումը» կոչվող հուշերի ժողովածուն[5], որն առաջին անգամ տպագրվել է 1979 թ. Միդհատ Շյուքրույի որդու՝ Թուրգութ Բլեդայի ջանքերով: Գրքի առաջաբանում հեղինակի որդին նշում է, որ տեքստը իմաստային փոփոխության կամ վերաձևակերպման չի

[4] Tasalp D., Ermeni Soykırımı: Sorumluluk ve utanç kavramları üzerine düşünceler, http://repairfuture.net/index.php/tr/ermeni-soykirimi-tanima-ve-tazminatlar-turkiye-den-bakis/ermeni-soykirimi-sorumluluk-ve-utanc-kavramlari-uzerine-dusunceler

[5] Bleda M Ş, İmparatorluğun çöküşü, İstanbul, 1973, s. 206.

ենթարկվել, միայն ընթերցողների համար այն ավելի հասկանելի դարձնելու համար որոշ օսմանյան բառեր և արտահայտություններ փոխարինվել են ժամանակակից համարժեքներով[6]: Այս հոդվածում փորձ ենք անելու ներկայացնել Բլեդայի հուշերում Հայոց ցեղասպանության և առհասարակ Հայկական հարցին վերաբերող անդրադարձները՝ XX դարի սկզբում Օսմանյան կայսրության իրավիճակի նրա վերլուծության համատեքստում:

2. Միդհատ Շյուքրյու Բլեդան որպես քաղաքական գործիչ

Միդհատ Շյուքրյու Բլեդան ծնվել է 1874 թ. սալոնիկցի Շյուքրյու Բեյի ընտանիքում:

Նախ սովորել է Ստամբուլում, ապա կրթությունը շարունակել Ժնևի համալսարանի բնական գիտությունների ֆակուլտետում: Վիդինի [Բուլղարիա- ծնթ. Ռ. Մ., Ն. Պ.] թուրքական համայնքի հրավերով որպես իսլամական դպրոցների տնօրեն ղեկավարել է տեղի թուրքական դպրոցները: Սալոնիկ վերադառնալուց հետո եղել է դպրոցի, ապա համայնքային հիվանդանոցի տնօրեն[7]:

Ժնևում ապրելիս ակտիվորեն մասնակցել է հակասուլթանական քաղաքական խմբերի գործունեությանը, համարվում է երիտթուրքական կազմակերպության տեղի մասնաճյուղի հիմնադիր: Վերադառնալով Օսմանյան կայսրություն՝ որպես Թալեաթի մտերիմ ընկեր մասնակցել է Սալոնիկում «Օսմանյան ազատության կոմիտեի»[8] հիմնադրմանը:

[6] Նույն տեղում, էջ 4:

[7] http://hakkindabilgial.com/mithat-sukru-bleda-kimdir/

Երիտթուրքերի իշխանության գալուց հետո երեք անգամ եղել է մեջլիսի անդամ՝ համապատասխանաբար Սերեզից (Սալոնիկ), Դրամայից (Սալոնիկ) և Բուրդուրից (Քոնիա): 1908 թ. մինչ «Միություն և առաջադիմություն» կուսակցության լուծարումը եղել է կենտրոնական գրասենյակի անդամ, իսկ 1916 թ. գլխավոր քարտուղար:

Բլեդան Առաջին համաշխարհային պատերազմում պարտությունից հետո ձերբակալվել է և անգլիացիների կողմից ուղարկվել Մալթա[9] որպես Հայոց ցեղասպանության

[8] 1906 թ. Սալոնիկում հիմնադրված «Օսմանյան ազատության կոմիտեն» “Osmanlı Hürriyet Cemiyeti” մեկ տարի անց միավորվեց 1902 թ. Փարիզում երիտթուրքական շարժման պառակտման արդյունքում ձևավորված «Առաջադիմություն և միություն» խմբի հետ (Terakki ve İttihad cemiyeti)՝ մի շարք քաղաքական նկատառումներով վերցնելով վերջինիս անունը: 1908 թ. խորհրդարանի վերաբացումից և Սահմանադրության վերականգնումից հետո այն վերածվեց «Միություն և առաջադիմություն» կուսակցության : Այս մասին մանրամասն տես Küçükkılıç İ., Jön Türklük ve Kemalizm Kıskacında İttihadçılık, İstanbul, 2016:

[9] Մեծ Բրիտանիան, չվստահելով թուրքական դատարաններին և մտադրություն ունենալով պատերազմական հանցագործներին դատապարտել անգլիական դատարաններում, 1919 թ. մայիսի 28-ին 67 բանտարկյալի «Բեքիրաղա բյոյուղյու» բանտից նավով տեղափոխում են Մալթա կղզի: Բացի Բլեդայից աքսորյալների շարքերում էին նախկին վարչապետ Սայիդ Հալիմ փաշան, հանրային գործերի նախարար Աբբաս Հալիմ փաշան, շեյխուլիսլամ Հայրի էֆենդին, արտաքին գործերի նախարար Ահմեդ Նեսիմին, արդարադատության նախարարներ Հալիլը և Իբրահիմը, ներքին գործերի նախարար Իսմայիլ Ջանփոլադը, հանրային գործերի նախարար Ալի Մյունիֆը և այլոք: Սկզբում բրիտանացիներն իրոք վճռականորեն մտադրված էին դատապարտել Մալթա աքսորված պատերազմական հանցագործներին, այդ թվում նաև՝ Հայոց ցեղասպանության պատասխանատուներին, սակայն հետագայում նրանց վճռականությունը հետզհետե թուլանում է, և Մեծ Բրիտանիան ցեղասպանության ոճրագործներին ի վերջո փոխանակում է անգլիացի ռազմագերիների հետ:

Այս մասին մանրամասն տես մանրամասն տես Մելքոնյան Ռ., Հայոց Ցեղասպանության կազմակերպիչների և իրականացնողների հերոսացման գործընթացը Թուրքիայում (1920-ական թվականներ), էջ 61-71,http://hpj.asj-oa.am/6144/1/61.pdf , ինչպես նաև Անումյան Մ., Միություն և առաջադիմություն կուսակցության անդամների դատավարությունը (1919 թ. ապրիլ-մայիս ամիսներ) Ստամբուլի ռազմական արտակարգ ատյանում, http://allturkey.am/.

կազմակերպիչ և իրականացնող: Ութ ամիս անց վերադառնալով Թուրքիա՝ Մուսթաֆա Քեմալից ստացել է քաղաքականություն վերադառնալու առաջարկ, բայց մերժել այն և տեղափոխվել Իզմիր: 1926 թ. Իզմիրի մահափորձի դատավարության[10] շրջանակներում ձերբակալվել է, սակայն կարճ ժամանակ հետո արդարացվել և բանտից դուրս եկել: 1930-ականներից վերադարձել է քաղաքական ասպարեզ և երեք անգամ ընտրվել մեջլիսի պատգամավոր Սեբաստիայից: Մահացել է 1956 թ. Ստամբուլում:

3. Միդհատ Շյուքրյու Բլեդայի «Կայսրության անկումը» գրքի շուրջ

Ինչպես արդեն նշվեց, Մ. Շ. Բլեդայի հուշերը սովորական օրագրի կամ նոթերի տեսքով գրված չեն: Իր աշխատությունն առանձին-առանձին ենթագլուխների բաժանելով՝ Միդհատ Շ. Բլեդան ժամանակագրական կարգով ներկայացնում է Օսմանյան կայսրության գոյության վերջին և հանրապետության առաջին տարիների զարգացումների իր գնահատականներն ու վերլուծությունները:

Բնականաբար, Բլեդան յուրահատուկ ուշադրություն է դարձնում իր ուզած թեմաներին՝ անտեսելով ու լռության մատնելով մի շարք իրադարձություններ: Ավելին, այս շրջանի

[10] 1926 թ. հունիսի 14-ին մի խումբ նախկին նախարարներ, պատգամավորներ և նահանգապետեր պլանավորել էին Իզմիրի Քեմերալթը թաղամասում Աթաթուրքի դեմ մահափորձ կազմակերպել: Սակայն Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը Բալըքեսիրում իր դեմ կազմակերպվող մահափորձը բացահայտող հեռագիր է ստանում: Արդյունքում ձերբակալվում, իսկ հետագայում նաև մահապատժի են ենթարկվում մի շարք նախկին բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում նաև դոկտոր Նազըմը: Այս մասին մանրամասն տես Müezzinoğlu E., İzmir Suikastı ve Ahmet Şükrü Bey, International Journal of Social Science, 2015, N: 38, p. 155-176:

օսմանյան քաղաքական գործիչներն էլ արժանանում են հեղինակի խիստ սուբյեկտիվ գնահատականներին: Հավատարիմ մնալով երիտթուրքական հայացքներին՝ Բլեդան խստորեն քննադատում է սուլթան Աբդուլ Համիդի ժամանակաշրջանն ու նրա վարած քաղաքականությունը: Նա գրում է. «Սուլթան Աբդուլ Համիդ, սուլթան Մեհմեդ Ռեշաթ և սուլթան Մեհմեդ Վահեդդին… Երեք սուլթանների կառավարման ընթացքում դեպքերի զարգացմանը մոտիկից հետևել եմ, դեպքերին անձամբ մասնակցելու հնարավորություն եմ ունեցել: Այս երեք փադիշահներից սուլթան Աբդուլ Համիդին երիտասարդ տարիներից չկարողացա սիրել»[11]:

Աբդուլ Համիդի կերպարը հակադրելով իր մտերիմ ընկերոջը Թալեաթ փաշային՝ Բլեդան շռայլորեն գովաբանում է նրան, որակում որպես վեհ, ազնիվ, արդարամիտ անձնավորություն: Մինչդեռ Էնվեր փաշային բնութագրելիս բավարարվում է մեկ-երկու զուսպ նախադասությամբ, իսկ Ջեմալ փաշայի կերպարին բացարձակապես չի անդրադառնում: Հատկանշական է, որ բավական ընդգծված գովաբանվում է նաև Մուսթաֆա Քեմալին: Այս հանգամանքը ևս մեկ անգամ ի ցույց է դնում իթթիհաթականների և քեմալականների գաղափարական կապը, ապացուցում, որ կայսրության անկումից հետո էլ արմատական փոփոխությունների արտաքին շղարշի տակ իշխանական հիմնական վեկտորները մնացին նույնը: Ավելին, գրքում բերված մի դրվագ վկայում է, որ նույնիսկ Թուրքիայում միակուսակցական համակարգի վերացումից հետո 1950 թ. իշխանության եկած Դեմոկրատական կուսակցության ղեկավարներն էլ էին երիտթուրքական ավանդույթների կրողներ ու շարունակողներ: Բլեդան գրում է, որ ռևմատիզմը բուժելու համար մեկնում է Բուրսա: Գյոնլու ֆերաթ կոչվող հյուրանոցի այգում նրան

[11] Bleda, նշվ. աշխ., էջ 90:

մոտենում է մի երիտասարդ, ով ներկայանում է որպես կազմակերպության [Միության և առաջադիմության] Բուրսայի մասնաճյուղի անդամ Մահմուդ Ջելալ: Նրա հետ զրույցից տպավորված Բլեդան Ստամբուլ վերադառնալուն պես միջնորդում է, որ նրան նշանակեն Իզմիրում գլխավոր քարտուղար[12]: Ինչպես պարզվում է հետագա շարադրանքից այս երիտասարդը ոչ այլ ոք էր, քան Թուրքիայի Հանրապետության երրորդ նախագահ, իսկ ավելի վաղ Աթաթուրքի օրոք վարչապետ Ջելալ Բայարը: Ուշագրավ է, որ Բայարն իրեն Բլեդայի սանն է համարում. «Երբ Աթաթուրքը նրան դարձրեց վարչապետ, ես Սեբաստիայի պատգամավորն էի: Մեջիլիսի առաջ կառավարության առաջին ծրագիրը ներկայացնող ելույթից հետո իջավ, մոտեցավ ինձ և ականջիս կամաց ասաց «Ձեր աշակերտից գոհ ե՞ք»[13]:

3.1 Միություն և առաջադիմություն կուսակցության ստեղծումն ու իշխանության գալը

Բնական է, որ գրքի առանցքային թեմաներից է Միություն և առաջադիմություն կուսակցության գործունեությունը: Բլեդան իր հուշերը սկսում է հետևյալ կերպ. «600-ամյա Օսմանյան կայսրությունը հիմքից օրորվում էր ինչպես որդնած բնով մի սոսի... ժամանակը, վատ ղեկավարները, սոսկ վայելքներով տարված սուլթանները, ամեն ինչ մոռացել և չէին նկատել կամ չնկատելու տվել, որ հռոմեացիներից հետո Եվրոպան իր բռում պահող, ահուդող սփռող հսկա Օսմանյան կայսրությունը վերածվել է սոսու, որի տերևները, ճյուղերը, բունն ու նույնիսկ արմատները չորացած են: Օսմանյան կայսրությունը կործանվում

[12] Նույն տեղում, էջ 54-55

[13] Նույն տեղում, էջ 56:

էր, սակայն նույնիսկ այդ պահին եվրոպացիները վախենում էին նրա հզորությունից: Փարիզում եվրոպացի պետական այրերի հետ ժողովներից մեկի ժամանակ արտաքին գործերի նախարար Ֆուադ փաշան «Ո՞րն է ամենամեծ տերությունը» հարցին պատասխանեց «Թուրքիան»: Բոլոր սկսեցին ծիծաղել: Սակայն Ֆուադ փաշան ամենայն լրջությամբ շարունակեց. «Այո, աշխարհի ամենամեծ պետությունը Օսմանյան կայսրությունն է, քանի որ հարյուրամյակներով դուք դրսից, մենք էլ ներսից փորձում ենք այն քանդել, բայց մինչ այժմ չենք կարողանում»: Անշուշտ, նա էլ գիտեր որ Օսմանյան կայսրությունը շատ մեծ արագությամբ անդունդն է գլորվում... Այս մթնոլորտում մի բուռ երիտասարդ մտավորականներ փորձեցին այդ անկումը կանխել»[14]: Մի կողմից հնարավորինս վատաբանելով նախորդ կառավարությանը՝ Բլեդան փաստորեն միաժամանակ չի մոռանում շեշտել Օսմանյան կայսրության դարավոր հզորությունն ու ընդգծել այդ հզորությունը փրկելու գործում երիտթուրքերի ներդրումը: Նա բավական մանրամասն ներկայացնում է Եվրոպայում ուսանող թուրք երիտասարդների գործունեությունը, որին ինքն էլ որպես Ժնևի համալսարանի ուսանող ակտիվորեն մասնակցել է: Ավելին, Բլեդան շեշտում է, որ ինչպես իր, այնպես էլ շատ երիտասարդների համար ուսում ստանալը պարզապես պատրվակ էր երկրից հեռանալու և կայսրության փրկության գործին ծառայելու համար: Հետևելով Փարիզում Ահմեդ Ռըզայի և դոկտոր Նազըմի գործունեությանը՝ Բլեդան նրանց նամակով համագործակցություն է առաջարկում, ստանում դրական պատասխան և Ժնևում ծավալում ակտիվ հակահամիդյան գործունեություն, նույնիսկ երգիծական ամսագիր է տպագրում: Մի քանի ամիս աշխատանքներ տանելուց հետո սակայն Ժնևի

[14] Նույն տեղում, էջ 13-14:

մասնաճյուղը ցրվում է, իսկ ինքը՝ Բլեդան էլ հոր հիվանդության պատճառով ստիպված լինում վերադառնալ տուն՝ Սալոնիկ: Այստեղ նա հանդիպում է այդ ժամանակ փոստատանը աշխատող Թալեաթի հետ: Բլեդան, Թալեաթը և Իզմիրի նախկին նահանգապետ Ռահմին մտերմանում են, երեկոները միասին անցկացնում: Մի երեկո էլ Թալեաթն առաջարկում է «հայրենիքի փրկության» համար կոմիտե ստեղծել[15]: Այս առաջակից մի քանի օր անց «Հինգ սոսի» կոչվող վայրում Թալեաթի հրավերով հավաքված մի շարք զինվորականներ հիմնում են «Օսմանյան ազատության կազմակերպությունը»[16]: Բլեդան մանրամասն ներկայացնում է կազմակերպությանն անդամակցելու կարգը. կազմակերպության անդամը միայն իրեն առաջնորդող անձին և երկու հոգու էր ճանաչելու: Բացի այդ, նրան չէր վերապահվում ոչ մյուսների հետ ծանոթանալու, ոչ էլ այլ անդամների մասին տեղեկություն հարցնելու իրավունք: Անդամակցության պայմաններին բավարարելու դեպքում թեկնածուի համար կազմակերպվելու էր երդման կարճ արարողություն: Նրան փակ աչքերով ուղեկցելու էին մի սենյակ, որի մեջտեղում մի լայն սեղան էր, սեղանի մի անկյունում Ղուրան և ատրճանակ: Թեկնածուն Ղուրանի վրա պետք է երդում տար ինքնասպան լինել, բայց կազմակերպության գաղտնիքները չբացահայտել[17]:

Ինչպես հայտնի է, երիտթուրքական կազմակերպությունը բավական արագ տեմպերով զարգանում է, հզորանում, արդյունքում նրանց ճնշման տակ սուլթան Աբդուլ Համիդը ստիպված վերընդունում է սահմանադրությունը, իսկ հետո

[15] Նույն տեղում, էջ 21:
[16] Նույն տեղում:
[17] Նույն տեղում, էջ 22:

գահընկեց արվում[18]: Այսպիսով, սկսվում է երիտթուրքական իշխանության տասնամյակը, որն ավարտվում է Առաջին համաշխարհային պատերազմում պարտությամբ ու կայսրության անկումով: Պետք է փաստել սակայն, որ Բլեդան հակված է իր կուսակցության բոլոր անհաջողությունները բարդել Աբդուլ Համիդի թողած ծանր ժառանգության, կայսրության ոչ մուսուլման փոքրամասնությունների և անշուշտ մեծ տերությունների քաղաքականության վրա, բայց գրեթե երբեք չի խոսում երիտթուրքական կառավարության սխալների մասին: Իսկ անժխտելի թերացումներն էլ բացատրում է երիտասարդությամբ, անփորձությամբ, ռոմանտիզմով: Ավելին, ինչպես կտեսնենք հաջորդ պարբերության մեջ նույնիսկ Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության մասնակցությունն ըստ Բլեդայի ոչ թե երիտթուրքական իշխանությունների որոշումն էր, այլ գերմանացիների գաղտնի սադրանքի արդյունք:

3.2 Առաջին համաշխարհային պատերազմը և Օսմանյան կայսրությունը

«Կայսրության անկումը» գրքում Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին մեծ տեղ է հատկացված: Առանձնապես կանգ չառնելով փաստական տվյալների, տարեթվերի, ճակատամարտերի մանրամասների վրա՝ Միդհատ Շյուքրյուն փորձում է վերլուծել պատերազմի պատճառով ստեղծված իրավիճակում Օսմանյան կայսրության դիրքորոշման ճիշտ և սխալ կողմերը, իսկ ավելի կոնկրետ արդարացնել պարտությունը: Ավելին, նույնիսկ պարտության մասին խոսելիս նա չի մոռանում հնարավորինս շեշտադրել պատերազմի ընթացքում եղած հաղթանակները, թուրքական բանակի «հերոսությունները»:

[18] Այս մասին մանրամասն տե՛ս Ünlü E., Osmanlı'nın Kahraman Hainleri: İttihat ve Terakki, http://www.etkiliyazar.com/osmanlinin-kahraman-hainleri-ittihat-ve-terakki/

Միևնույն ժամանակ գրեթե չի գրում մարդկային ու տարածքային կորուստների մասին:

Հետևելով իր մշտական գծին՝ Բլեդան գրում է, որ Թալեաթն առհասարակ դեմ էր պատերազմին: Ավելին, նա, ինչպես նաև սադրազամ Սաիդ Հալիմ փաշան, մյուս նախարարներն ու կուսակցության Կենտրոնական Բյուրոյի անդամները տեղյակ չէին գերմանական նավերով նախատեսվող Սևծովյան օպերացիայի մասին[19]: Ըստ Բլեդայի թերևս միայն Էնվերն էր տեղյակ «Գյոբեն» և «Բերսլաու» կամ թուրքական անուններով «Յավուզ» և «Միդիլլի» նավերով գերմանացիների կազմակերպած հարձակման մասին[20]. «Էնվեր փաշայի շտապողական և անհետևողական քաղաքականության արդյունքում ամեն ինչ տակնուվրա եղավ, - գրում է Միդհատ Շյուքրյուն,- Պատերազմի հորձանուտում հայտնվեցինք»[21]: Ներկայացնելով երկրում ստեղծած իրավիճակը՝ Բլեդան անդրադառնում է Էնվեր փաշայի նախաձեռնած Սարիղամիշի ձմեռային հարձակմանը, սակայն թուրքերի խայտառակ պարտությունների մասին խոսելու փոխարեն շեշտում, որ չնայած ճակատամարտն ավարտվեց ռուսների նոր առաջխաղացումով, սակայն ուժերի անհավասարությանը հակառակ թուրքերը մարտնչեցին հերսաբար և ի վերջո նախ էրզրումում, ապա Բրեստ-Լիտովսկում խաղաղության պայմանագիր կնքեցին: Ռուսական հեղափոխության, ցարի գահընկեցության և այլ գործոնների մասին լռելով՝ Բլեդան

[19] Bleda M., նշված աշխ., էջ 77:

[20] 1914 թ. հոկտեմբերի 29-ին Առաջին համաշխարհային պատերազմ Օսմանյան կայսրության մուտքի պատճառ դարձած Սևծովյան դեպքի մասին տես Ozan T, Amiral Souchon'un Donanma Komutanı Olması ve Rus Limanlarının Bombalanması (29 Ekim 1914), OTAM, N 36, 2014, s. 201-227:

[21] Bleda M. Ş., նշված աշխ., էջ 79:

Թալեաթին համարում է Բերստ-Լիտովսկի պայմանագրի հայր, ավելին նշում, որ նրա շնորհիվ Օսմանյան պետությունը փրկվեց մեծ և ուժեղ թշնամուց[22]: Այս վկայակոչումից հետո որևիցե կերպ չմեկնաբանելով պատերազմում պարտության պատճառները, նաև Սևրի պայմանագրի կնքումը կամ դրա վերանայումը Լոզանի կոնֆերանսում, Բլեդան անցնում է նախկին ղեկավարների փախուստին: Նա գրում է, որ «Թալեաթի, Էնվերի, Ջեմալի և «Միության և առաջադիմության» կենտրոնական գրասենյակի անդամներ Նազըմի, Բեհաեդդին Շաքիրի Ստամբուլում մնալը հավասարազոր էր գիտակցված ինքնասպանության»[23]: Միևնույն ժամանակ Թալեաթի կերպարը չնսեմացնելու համար Բլեդան շեշտում է, որ նա ի սկզբանե դեմ էր այս փախուստին, սակայն դեպքերի արագ զարգացումը և ընկերների շարունակական պնդումները ստիպեցին նրան տեղի տալ: Կրքերը հանդարտվելուն պես հետ վերադառնալու հույսով նա համաձայնվել է կարճ ժամանակով Բեռլին գնալ և այնտեղ սպասել իրադարձությունների զարգացմանը: Հատկանշական է, որ երիտթուրք առաջնորդների փախուստը Բլեդան չի կապում ոչ Հայկական հարցի, ոչ նրանց գործած ոճրագործությունների հետ: Անշուշտ նա գրում է Ստամբուլում ռազմական դատարանների որոշումների մասին, սակայն դրանք կապում ոչ թե կոնկրետ գործած հանցագործությունների, այլ մեծ տերությունների կամայականության հետ: Առհասարակ Հայոց ցեղասպանության և Հայկական հարցի անտեսման միտումը շատ հստակ է Բլեդայի գրքում: Նույնիսկ խնդրին անդրադարձներ կատարելիս նա որևէ հստակ, փաստական նյութ չի տալիս, հայերին էլ դիտարկում որպես արևմտյան տերությունների ձեռքում անկամ, թույլ գործիք:

[22] Նույն տեղում, էջ 85:
[23] Նույն տեղում, էջ 122:

3.3 Հայկական հարցի արտացոլումը Մեհմեդ Շյուքրյու Բլեդայի հուշերում

Ինչպես արդեն նշվեց, Մ. Շ. Բլեդան առհասարակ քիչ է գրում Հայկական հարցի մասին, այն դիտարկելով որպես հայերի դավաճանության հետևանք: Ընդ որում, եթե այլ գործիչների հուշերում կան հայերի հավատարմության մասին երկար մտորումներ, ապա Բլեդան անցյալին առհասարակ չի անդրադառնում, օսմանյան կայսրությունում հայերի ունեցած դերի մասին չի խոսում: Նրան ավելի շատ հետաքրքրում են հայերի, ինչպես նաև այլ ոչ մուսուլմանների գործողությունների հետևանքները, ոչ դրդապատճառները: Բայց կա երկու հանգամանք, որոնք բավական հետաքրքիր են դարձնում խնդրին նրա նույնիսկ հպանցիկ անդրադարձները:

Առաջինն այն է, որ Միդհատ Շյուքրյուն ամեն կերպ ցույց է տալիս, որ անձամբ ինքը որևիցե կապ չի ունեցել հայերի տեղահանությունների հետ, ավելին կենտրոնական իշխանությունները կտրականապես դեմ են եղել հայերի նկատմամբ կամայականություններին: Նա գրում է. «Արևելքում կրքերը բորբոքված էին, սահմանին ամեն տեսակ թուլության արտահայտումը կարող էր մեծ խնդիրների պատճառ դառնալ: Գիտեինք, որ հայերը արտաքին ազդեցությամբ ապստամբել են և արտասահմանից օգնություն են ստանում: Սա հաշվի առնելով՝ սահմանային քաղաքներից և ավաններից որոշ կասկածելի հայերի դուրս էինք հանում: Այս հարցում ծայրահեղական դիրքորոշմամբ կենտրոնական իշխանության ուշադրությունը գրված Բեհաեդդին Շաքիրի մոտեցումն անհանգստություն առաջացրեց: Միության և առաջադիմության այս հզոր անդամն իրեն այնպիսի բաներ էր թույլ տալիս, որ ժամանակ առ ժամանակ

նկատողության կարիք էր զգացվում: Հարմար գտանք վիճակն ավելի լավ ուսումնասիրելու և ճիշտ միջոցներ ձեռնարկելու համար արևելյան վիլայեթների վալիներին նորերով փոխարինել: Նոր վալիներին հրաման էր տրվել լսել բողոքները և անհրաժեշտության դեպքում կտրուկ միջոցներ ձեռք առնել»[24]: Հետագա շարադրանքում սակայն ոչ գործադրված միջոցների, ոչ տեղահանված հայերի մասին խոսք չկա: Փոխարենը ներկայացվում է Դիարբեքիրի նախկին նահանգապետ դոկտոր Ռեշիդ բեյի հետ հեղինակի ունեցած խոսակցությունը. «Դոկտոր Ռեշիդ բեյը եկել էր կենտրոնական գրասենյակ և հայտնել, որ ուզում է ինձ հետ խոսել: Անմիջապես նրան ընդունեցի: Երբ նստեց դիմացի բազկաթոռին, ակնհայտ էր, որ երկուսս էլ նյարդայնացած ենք: Շատ լուրջ տոնով նրան հարցրի. «Դուք բժիշկ եք, հետևաբար պարտավոր եք փրկել մարդկանց: Ինչպես եղավ, որ աչք փակեցիք այդքան մարդու սպանության վրա»: Դոկտոր Ռեշիդ բեյը վրաս նայեց և կարճատև դադարից հետո ամենաքիչը իմ ձայնի չափ խիստ տոնով ասաց. «Բժիշկ եմ, բայց չեմ կարող մոռանալ ազգությունս: Ռեշիդն անշուշտ բժիշկ է և ստիպված է իր մոտեցումները համապատասխանեցնել այս փաստին: Սակայն դոկտոր Ռեշիդն այս աշխարհ նախ և առաջ որպես թուրք է եկել: Իմ ազգությունն ամեն ինչից կարևոր է: Եթե ինձ պես հնարավորություն և առիթ ունենայիք տեսնել, թե Դիրբեքիրում ինչպես են հայերը արտաքին ու ներքին օգնություն ստանում, ինչպես են իրենց տրված տարբեր խոստումներով խաբվել, ինչպես են ստացած օգնությամբ բարօրության մեջ ապրում և արդյունքում երկրիս ամբողջականության վրա ոտնձգություն անում, այստեղ նման մեղադրանքներ չէիք ներկայացնի[25]: Արևելքում հայերն մեր դեմ այնպիսի ապստաբություն էին սկսել, որ եթե թույլ տայինք

[24] Bleda M. Ş., նշված աշխ., էջ 56-57.
[25] Նույն տեղում, էջ 57:

նրանց մնալ նույն տեղում, անհնար կդառնար շրջապատում մի կենդանի թուրք գտնել, մի մուսուլման տեսնել: Դիարբեքիրում գտնվելիս նրանց անձնական գործերն ուսումնասիրեցի, ապրելակերպին ծանոթացա, մտածելակերպը հասկացա: Նրանց տներում արված խուզարկությունները թույլ տվեցին ինձ միանշանակ հասկանալ նրանց նպատակները: Որոշ տներում գտնված զենք-զինամթերքը բավարար էր մի հսկայական բանակ մեկ վայրկյանում ոչնչացնելու համար: Սարսափելի և հզոր կազմակերպություն ունեն ոչ միայն արևելքում, այլ երկրի չորս կողմերում: Եթե ազատ թողնենք, շատ շուտով Անատոլիայում մոմով պետք է թուրք փնտրենք: Այսինքն՝ կամ նրանք մեզ, կամ մենք նրանց: Նրանց համար մեզ վերացնելը պարտադիր պայման է: Հասկանում եք, որ նրանք մեզ ստիպեցին անխուսափելի պաշտպանություն սկսել: Ես էլ մտածեցի. «Էհ դոկտոր Ռեշիդ, երկու տարբերակ կա: Կամ հայերն են թուրքերին ոչնչացնելով երկրի տեր դառնալու, կամ թուրքերի կողմից ոչնչացվելու են: Երկու տարբերակի մեջ պետք է ընտրություն կատարեի և ընտրությունս արեցի: Թրքությունս հաղթեց բժշկությանը, այլ կերպ չէր էլ կարող լինել և չեղավ»: Ես [Բլեդան] հարցրի. «Բժիշկ, ձեր խիղճը ձեզ չի՞ տանջում»: Ռեշիդը պատասխանեց. «Ինչպես կարող է չտանջել: Սակայն ես սա չեմ արել իմ անձնական հպարտությունը բավարարելու կամ գրպանս լցնելու համար: Տեսա, որ հայրենիքս ձեռքից գնում է, ազգիս բարեկեցության համար աչքերս փակեցի և առանց մտածելու առաջ նետվեցի»: «Իսկ պատմական պատասխանատվությո՞ւնը»: «Եթե այս քայլերիցս հետո պատմության առաջ մեղավոր դուրս գամ, դա էլ ոչինչ: Ինձ բնավ չի հետաքրքրում, թե ուրիշ պետություններ իմ մասին ինչ են գրում կամ գրելու»: Դոկտոր Ռեշիդը խոսքը վերջացրեց ու լռեց, ես

էլ լռեցի»[26]: Այստեղ Բլեդան, ըստ էության, գրեթե բացահայտ խոսում է Ռեշիդի իրականացրած ոճրագործությունների մասին, բայց ամեն դեպքում նշում է, որ Ռեշիդը միամիտ և իդեալիստ երիտասարդներից է, հայտնի իր ազատասիրությամբ, արդարամտությամբ, հավատարմությամբ ու մարդկայնությամբ[27]: Ապա նաև շեշտում է, որ 1894 թ. սկսված հայկական դեպքերի ժամանակ, որոնք գրքում կոչվում են «Սասունի առաջին ապստամբություն», երբ, հեղինակի կարծիքով, հայերը թուրքերով բնակեցված գյուղերում սպանություններ ու հրկիզումներ էին կազմակերպում[28], Ռեշիդը ստիպված է լինում բանակում բժիշկների բացը լրացնելու համար հինգ ամսով մեկնել Սասուն[29]:

Ներկայացված խոսակցության համատեքստում կցանկանայինք առանձնացնել մի փաստ. Ռեշիդը շեշտում է, որ ամեն ինչ արել է իր երկրի համար, գրպանները լցնելու նպատակ չի ունեցել: Բլեդան անշահախնդիր է համարում նաև երիտթուրք մյուս պարագլուխներին: Մասնավորապես, Եվրոպա Թալեաթի և մյուսների փախուտի մասին խոսելիս Բլեդան նշում է, որ նրանք գումարի խնդիր ունեին և օրինակ՝ Թալեաթը ընկերների օգնությամբ միայն իր մեկնման ու մի քանի ամսվա ապրուստի փողն էր կարողացել հավաքել[30]: Երիտթուրքերի անշահախնդիր լինելու մասին այս պնդումներն անշուշտ հեռու են իրականությունից. ավելին, հայկական լքյալ գույքը հետպատերազմական տարիներին շատ թուրք ընտանիքների հարստացման հիմք դարձավ: Ինչ վերաբերում է կոնկրետ Թալեաթին, Ջեմալին, Ռեշիդին, ապա 1926 թ. մայիսի 29-ին

[26] Նույն տեղում, էջ 58-59:
[27] Նույն տեղում:
[28] Խոսքը 1894-1896 թթ. Հայկական կոտորածների մասին է, որոնց զոհ դարձավ մոտ 300.000 հայ:
[29] Նույն տեղում:
[30] Նույն տեղում, էջ 122-123”

ԹԱՄԺ-ը սկսում է քննարկել Թուրքիայի կառավարության կողմից ուղարկված «Հայկական հանցագործ կոմիտեների կողմից սպանված կամ էլ տարբեր կերպ հալածանքի ենթարկված պետական գործիչների ընտանիքներին անշարժ գույքի և հողատարածքի տրամադրման վերաբերյալ» օրինագիծը, որը միաձայն քվեարկությամբ ընդունվում է ԹԱՄԺ-ի կողմից, պաշտոնապես հրապարակվում և ուժի մեջ մտնում 1926 թ. հունիսի 27-ին (թիվ 882 օրենք): Հայկական ունեցվածքից մասնաբաժին ստացողների ցուցակում ընդգրկված էին նաև վերոնշյալ անձինք[31]:

Վերադառնալով Մ. Շ. Բլեդայի հուշերին՝ նշենք, որ Թալեաթի փախուստի նախօրեն ներկայացնելիս՝ նա կրկին անուղղակիորեն ընդգծում է, որ հայերի տեղահանության հետ կապ չունի: Բլեդան գրում է, որ մտերմությունից դրդված պատրաստվում էր փախչել Թալեաթի, Էնվերի և Ջեմալի հետ: Մեկնելուն նախորդող երեկոյան Իհսան Նամըք Փորոյի տանը կազմակերպված ընթրիքին սակայն Բլեդայի կինը դիմում է Թալեաթին՝ խնդրելով պարզաբանել արդյոք իր ամուսինը կապ ունի հայերի աքսորի հետ: Թալեաթն էլ, ըստ Բլեդայի, պատասխանում է, որ Միդհատ Շյուքրյուն երբևիցե հայերի տեղահանության հետ կապ չի ունեցել և թույլ է տալիս նրան մնալ Ստամբուլում[32]:

Իր անմեղության հարցը Բլեդան ևս մեկ անգամ բարձրաձայնում է Մալթայում անցկացրած աքսորի մասին

[31] Օրենքի ընդունման և կիրառության մասին մանրամասն տես Մելքոնյան Ռ., Հայոց Ցեղասպանության կազմակերպիչների և իրականացնողների հերոսացման գործընթացը Թուրքիայում (1920-ական թվականներ), էջ 61-71, http://hpj.asj-oa.am/6144/1/61.pdf

[32] Bleda M. Ş., նշված աշխ., էջ 124:

խոսելիս: Նա գրում է, որ «Անատոլիայում» պահվող ռազմագերիների թվում էր նաև լորդ Քերզոնի եղբայրը: Անգլիացիներն առաջարկեցին Քերզոնի եղբորը փոխանակել Մալթայում գտնվող գերիների հետ մի պայմանով. պետք է ընտրվեր հայկական կոտորածների հետ կապ չունեցող քսան մարդ[33]: Իր անվան ընդգրկումն այդ ցուցակում Բլեդան համարում է անմեղության միանշանակ ապացույց:

Սրա հետ մեկտեղ Բլեդան բացեիբաց գրում է, որ հայերն ու մյուս քրիստոնյաներն իրենք են մեղավոր բոլոր դժբախտություններում: Նա նշում է. «Բոլոր ջանքերին հակառակ չկարողացանք կանխել օսմանյան սահմանադրության պատճառով անարխիայի տարածումը: Հույն պատգամավոր Բոշո էֆենդիի մեջլիսի տրիբունայից ասած այս նախադասությունը չեմ կարողանում մոռանալ. «Ես, -ասում էր Բոշո էֆենդին, - օսմանյան բանկի չափ օսմանցի եմ»: Իր գաղափարները նման կերպ արտահայտող մարդը սահմանադրության հռչակումից հետո մեջլիսի անդամ դարձավ: Նրան հետևեցին կոզիմիդիները, վարդգեսները և ուրիշները»[34]:

Եզրակացություններ

Միդհատ Շյուքրյու Բլեդայի հուշերում ականատես ենք լինում XX դարի առաջին քառորդում Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքական զարգացումների պատճառների ու հետևանքների վերլուծությանը: Հուշերի միջոցով ծանոթանում ենք այդ ընթացքում երկիրը ղեկավարող մարդկանց ներքին հարաբերություններին և տեսնում դրանց ազդեցությունը քաղաքական որոշումների ընդունման մեխանիզմի վրա:

[33] Նույն տեղում, էջ 134-135:
[34] Նույն տեղում, էջ 63:

«Կայսրության անկումը» գիրքը հակահայկականության ուշագրավ դրսևորում է. գրքում հայերի դահիճները ներկայացվում են միանշանակ դրական, ազգանվեր և անշահախնդիր մարդկանց կերպարներում: Բլեդայի հուշերը նաև թույլ են տալիս հստակ տեսնել երիտթուրքերի և քեմալական շարժման օրգանական կապը և այսպիսով հասկանալ, թե ինչու Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո էլ արևմտականացման ջատագով Մուսթաֆա Քեմալը շարունակեց հայերի և այլ քրիստոնյաների հետապնդումները:

АРМЯНСКИЙ ВОПРОС В МЕМУАРАХ МИДХАТА ШЮКРЮ БЛЕДЫ

(Резюме)

Рубен Мелконян

Наира Погосян

В статье представлен анализ мемуаров известного османского политического деятеля, главного секретаря партии Единение и прогресс Мидхата Шюкрю Бледы. В книге представлена общественно-политическая жизнь Османской империи начала XX века. Подробно излагая историю создания организации Единение и прогресс и прихода к власти младотурков, вовлечение Турции в Первую мировую войну, Бледа естественно обращается и к Армянскому Вопросу. Будучи ярым последователем младотурецкой идеологии, а также близким другом Талеат-паши, он не осуждает ни гонений, ни резни армян. По мнению Бледы армяне, как и другие христиане империи сами виноваты в своих бедах. Вместе с тем,

видимо желая освободить себя от груза ответственности, Бледа неоднократно упоминает в тексте о своей непричасности к переселению армян.

THE ARMENIAN QUESTION IN THE MEMOIRS OF MİDHAT SHUKRU BLEDA

(Summary)

Ruben Melkonyan
Naira Poghosyan

The paper is devoted to the analysis of the memoirs of famous Ottoman politican, general secretar of the Party of Union and Progress Midhat Shukru Bleda. In the book, socio-political life of Ottoman Empire in the beginning of XX century is represented. Describing detailed history of the formation of Committee of Union and Progress and coming to power of Young Turks, the involvement of Ottoman Empire in the World War 1, Bleda also refers to the Armenian Question. Being devout Young Turk and also close friend of Taleat pasha, Bleda does not condemn nor repressions, neither massacres of Armenians. Moreover, he is confident that Armenians and other Christians living in the Empire are themselves guilty in all their troubles. However, wanting to preserve himself from any kind of responsibility he continuously maintains his innocence as regards to the exile of Armenians.